ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04

Ե 40/7.1-6859
«08» 10 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին նախարար,

Ի կատարումն ՀՀ արդարադատության նախարարի 2025 թվականի սեպտեմբերի 26-ի N 635-Ա հրամանի՝ կից ուղարկվում է 2025 թվականի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 3-ը Խորվաթիայի Հանրապետություն (Զագրեբ) գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԾՈՎԻՆԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ Արաիկ Ավետիսյան
Քրեակատարողական ծառայության շտաբ
հեռ. (060) 47-37-55

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ Ծովինար Թադևոսյանի 2025թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 3-ը Զագրեբ (Խորվաթիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված անձ՝

Ծովինար Թադևոսյան - ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Զագրեբ (Խորվաթիայի Հանրապետություն), 2025թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 3-ը:

Հրավիրող կողմը՝ Արդարադատության, հանրային կառավարման և թվային փոխակերպման նախարարություն:

Գործուղման նպատակը՝ Ճանաչողական այցի իրականացում «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին, 2-րդ փուլ – լրացուցիչ աջակցություն» ծրագրի շրջանակներում:

Կատարված այցերը՝ Խորվաթիայի Արդարադատության, հանրային կառավարման և թվային փոխակերպման նախարարությունում կայացած հանդիպման ընթացքում Ծովինար Թադևոսյանը կարևորել է քրեակատարողական ոլորտում փոխգործակցության առկայությունն ու դրա հետագա ընդլայնումը՝ ընդգծելով փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Հանդիպմանը ներկայացվել է Արդարադատության նախարարության կողմից իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղությունները՝ ընդգծելով մասնավորապես քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների զարգացման գործընթացների առաջնահերթությունը:

Բացի այդ, քրեակատարողական ծառայության պետն այցի շրջանակներում հանդես է եկել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգի առանձնահատկությունները և զարգացման տեսլականը» թեմայով զեկույցով/բանախոսությամբ, որտեղ գործընկերներին ներկայացվել է ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումները, հիմնական գործառույթները,

կառուցվածքը և պատմությունը, գործող քրեակատարողական հիմնարկները և կառուցվածքային ստորաբաժանումները: Ներկայացվել են հյուրընկալող կողմին հետաքրքրող վիճակագրական տվյալներ, ինչպես նաև ազատազրկված անձանց պահման պայմանների, իրականացվող վերականգնողական ծրագրերի, կատարված և սպասվող փոփոխությունների ու բարեփոխումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն: Միևնույն ժամանակ, խորվաթական կողմին է ներկայացվել քրեակատարողական ոլորտում միջազգային փորձի փոխանակման առաջնային ուղղությունները: Պատվիրակության անդամները պատասխանել են Խորվաթիայի Արդարադատության նախարարության ներկայացուցիչների հարցերին և տվել անհրաժեշտ պարզաբանումներ:

ՀՀ պատվիրակության կողմի ելույթներին հաջորդել է խորվաթական կողմի զեկույցը, որի ընթացքում ներկայացվել են Խորվաթիայի քրեակատարողական և պրոբացիայի համակարգերի կառուցվածքը, իրավական կարգավորումները, հիմնական գործառույթները, դատապարտյալների ախտորոշման, վերասոցիալականացման և բժշկական ծառայությունների առանձնահատուկությունները՝ ներկայացնելով գործող մեխանիզմներն ու դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև իրականացվող բարեփոխումների ընթացքը:

Այց է իրականացվել Ռիեկայի պրոբացիայի կենտրոն և քրեակատարողական հիմնարկ: Քրեակատարողական հիմնարկում շրջայցի ընթացքում ներկայացվել են ազատազրկված անձանց պահման պայմանները, արտաքին աշխարհի հետ կապի միջոցները և անվտանգության պահպանման խնդիրները:

Այց է իրականացվել Լեպոգլավայի բարձր անվտանգության քրեակատարողական հիմնարկ, որի ընթացքում ներկայացվել է հիմնարկն ու դրա ենթակառուցվածքները, պահման պայմանները, դատապարտյալների զբաղվածության և աշխատանքի ապահովման համար իրականացված քայլերը և գործող պայմանները, մասնավորապես՝ արհեստանոցների ստեղծում, երաժշտական, հոգեբանական և նկարչական սենյակների կահավորում:

Ներկայացվել է հիմնարկի «ինքնաապահովման» մոդելը՝ դատապարտյալների կողմից անասնապահության և այգեգործության միջոցով սնունդի արտադրման և պատրաստման եղանակով:

Կայացել է հանդիպում Խորվաթիայի արդարադատության նախարարության ուսումնական կենտրոնում: Ներկայացվել է Կենտրոնի կառուցվածքը, քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների համար գործող վերապատրաստման ծրագրերը, պաշտոնի նշանակմանը նախորդող դասընթացները:

ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական ծառայության պետ **Ծովինար Թադևոսյան**

08.10.2025թ.